

կան գործարանների, պէտք է խօկոյն և եթ բժշկուել, Խստիւ
պէտք է խոյս տալ այնպիսի ջուր գործ զնելուց, որ կարող է ապա-
կանուած լինել մարդու կոկղանքով. կառկածաւոր է ջուրը այն
հորերի, որոնք խոր չեն և ուր հաւաքւումեն անմիջապէս սուզ-
ուած ջրերը, ճահիճների, լճերի, առուների և գետերի ջրերը և
ուր հաւաքւումեն կեզտոտ ջրեր՝ նոյնպէս անվտանգ չեն: Մանա-
ւանդ վասնգաւոր է այն ջուրը, որը որ և իցէ կերպիւ ապական-
ուած է խօլերով հիւանդի կղկղանքից: Հարկաւոր է ուշ դարձնել
որ ամսնների և կեզտոտ շորերի լուացած ջուրը յընկնի ջրհորների
և առուների մէջ, նաև մօտիկ լրժափուի: Եթէ ապահով ան-
վտանգ ջուր չէ կարելի գանել, այն ժամանակ լու է գործ զնել եռ-
եկած ջուր, վերջինս պէտք է հովացնել ծածկած ամանի մէջ, որ-
պէս զի զրաց բան յընկնի մէջը: Ջրի վերայ ասածները վերաբե-
րումէ ոչ միայն խմելու ջրին, այլ ինչ որ տան մէջ գործ է զնվում:
Խօլերով հիւանդի հետ հաղորդութիւն լըպէտք է ունենալ, նորան
պէտք է հեռացնել մի առանձին տեղ, և պէտք է ինամուին ա-
ռանձին մարդիկներով. խօլերով հիւանդի շորերը և այլ իրեղէն-
ները եթէ չէ կարելի վարակազուրկ անել հինգ տոկան կարօվի
թթու ունեցազ ջրով լաւ է ջրի մէջ եռ տալ կամ այրել:

Բայց ամենագլխաւոր նախազգուշութիւնն է մաքուր օգը, ուստի
հարկաւոր է պատուհանները և գոները միշտ բաց պահել, որպէս
զի ապականուած օղը կարողութիւն ցունենայ թանձրանալու:
Վերոյ ասածները եթէ կաստրուի՛ չէ կարելի հիւանդանալ:

ԲԺ. Մ. Զ.

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱՐԻ ԵԽԵՎԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԱՐԹԻՒՏ.

ԱՅ ՃՈՒՍԱՄ ԲԷ ՀՐԱՄԱՐԱԿԱԾ Է.Ք ԻՄ ՆԱԽՈՐԴ ՆԱՄԱԿԸ, ՈՐՈյ մէջ
առաջին անգամն լինելով կը զրուատէի վանեցիները իրենց այն մի քանի
քայլերի մասին՝ որք գէպի ընդհանուր համակրութիւն կառաջնորդեն
զիրենք: Այդպիսի մի նոր ցցց՝ որ կը նորոգէ սիրտերը, զգացումները,
և գաղափարը՝ պատրանք չէ, և ես չեմ կըրնար խաբել զիս կամ ուրիշ-
ները: Ստուգիւ այս վերջին ամիսների մէջ մի քանի զօրաւոր առիթներ,

կարծես առանձնական զօրութիւնով մը, իրարու միացուցին սիրտերը, զգացումները և գաղափարը, Այս վիճակը մի քիչ միթթարական է, ոի մի քիչ առաջ (10-20 տարի, մեր օրով գոնեա) ընդհանուր համակրութիւն ըսուած բանը՝ վանեցիների համար բոլորովին նորանշան էր, կամ գրեթե չկար:

Եթէ մտնէիր Վանի ժողովրդականութիւն կազմող ամէն մէկ էտեւ մէջ, ոչինչ չէիր գտներ, եթէ ոչ մի հայուածք՝ որ բոլորովին պաղ արիւնով կընկատէր զքեղ, մի զգացում՝ որ կարհամարհէր հետաքրքրութիւնդ, մի սիրտ՝ որ ընկերհաշտական գաղափարներդ կանգունէր, մի միտք որ տեղի կտար ամուլ սերմերին. որի կռուփը՝ համազային արիւնով կըներկէր, և որի լեզուն՝ եղբայրը կամ հայը թշնամանելով կըպարծենար, Խակայն պէտք է խոստովանել որ մի միայն Վանը չէր որ ունէր այսօրինակ կեղտոտութիւն մը...

Ժամանակը հասած է ամէնքը ամէնքի համար պատրաստել, ըսած է Փարիզի հոչակաւոր բանաստեղծն: Այսպիսի մի նպատակէտի վրայ թեականինելու համար, ուրեմն բաւական չէ լոկ համակրութիւնով մը զոհ լինել, որ կընայ խախտուել, բաւական չէ որ միմիայն ազդեցիկ կառափարիչներն ժողովուրդը առաջնորդեն, այլ հարկէ որ ժողովուրդը օգնէ նոցա, աջակցի սիրէ, ընկերհաշտական զգացումներով մէկզմէկը գրկախառնեն, ընդհանուր ջերմեռանգութիւնովմը տոգորուին, և շարժուին հաճելի լինել այն գերմարդկային զօրութեան, որի ձեռքով հաւասարապէս կըպակուին Յիսուսի խաչին և Ազգ. վերակենդանութեան խաչակիրներն, Խաչը կըել՝ որի առաջին օրինակն եղաւ Յիսուս, խիստ հշշտ է, զայն լքանելն միայն հակառակ է կրօնային և ազդային զգացումներին:

Դեռ շատ բա՞ն կայ, որոց մէջ պէտք է առաջ դիմեն վանեցիներն միակողմանի առաջզիմութիւն՝ մեզ համար չբանար այն ասպարէզը, զոր ունին արդի եւրոպացիներ, Բաւական չէ որ մեր լինաւուրց միօրինակութենէն մի բան փոխեմք, և ընդհանուր տեսակետով հրապարակ ելնեմք, իբր թէ ամէն բան փոխած եմք, Միծաղելի է այս, և երբ այսպէս դատեմք, մեր սահմանէն գուրս քայլմը անզին չեմք երթար, և մեր գաղափարը կը սահմանափակեմք այն գաղղիացիին պէս որ՝ ցեցակեր կախաղանի մը տեղ քարկերտ կախաղան մը ունենալն՝ առաջդիմական է, կըսէր, և բարդաւոր կը համարէր ինզինք, և ամբողջ Գաղղիան:

Մի ժամկետ ալ Արարած եկեղեցոյ հիմարիստեան առնելի:

Մայիս 27-ն էր, Այն օրը տօնելի օրմ՝ էր վանեցիների համար, Ամէն մարդ՝ երկու անձանօթ զօրութիւններով ելեքտրականացրած, պատրաստուած էր իւր կրկին պարտականութիւնները կատարելու փութալ. մին՝ կրօնային, իսկ միւսը՝ ազգային*): Առաջինը մարդկային՝ սիրտերէն

(*) Արարք եկեղեցու հիմնարկութիւն էւ Ասէմ. տարեգարձն:

մինչև Աստուծոյ Աթոռը ձգուած երկայն շղթային վրայէն կառաջնորդէր հոգեպաշտին ջերմեռանգութիւնները դէպի Աստուծուած, իսկ վերջինը մարդկային սիրտերէն մինչև Հայաստանի սիրտը երկնցած շղթային վրայէն կառաջնորդէր հայրենասէրին զգացումներն դէպի Հայաստան... Կարելի է ըսել թէ այն օրը ամէն մարդ կրօնասէր էր և հայրենասէր, Կրօնասիրութիւնը՝ կանուխէն ծագած լինելով ամէնքի սիրտերի մէջ, (արդէն կանուխէն սկսած էր եկեղեցւոյ, հիմնարկութեան արարողութիւնը) արշալոյսէն իվեր երկու սեռէ հօծ Հետաքրքիրներն՝ ամէն կողմերէ, նոյն իսկ շրջակայ գիւղերէն, սկսած էին իոնուել եկեղեցիի փլատակների վրայ, Հաւանական հաշուով 5000 կանցնէր առոնց թիւն, Փամերգութեան սովորական արարողութիւններն աւարտելու մօտ լինելով՝ բարեպաշտ Հետաքրքիրներն կսպասէին, Հիմնարկութեան արարողութիւնը սկսաւ, Հետաքրքիրների մեծ մասն՝ նոյն իսկ պատերի, տանիքների վրայ, և դստիկոնների մէջ լցուած լինելով, և առաջին անգամ՝ տեսնելով այսպիսի հանդէս, յափշտակուած էր. Աւելորդ չէ ասել թէ ամենքը բարերազդ կը համարէին ինքզի՞նին՝ արժանացած լինելով սոյն հանդիսին, որպէս թէ նմանէր նա ազգվերակենդանութեան մի նմանօրինակ հանդիսին:

Գեր. Առաջնորդ Սրբազնան՝ (Պօղոս Եպիսկոպոս) որի կընկերակցէին Գեր. Երեմիա Եպիսկոպոս 8. Սարգիսնեան և ուրիշ երեք Կընկերներ. Հանգիսին ուղղութիւնը կը վարէր, Թափօրը խիստ շքեղ էր, և արարողութիւններն թէ Հետաքրքրական էին և թէ հրապուրիչ. Գեր Առաջնորդի Սրբազն ներկայութիւնը, և ոչ թէ եկեղեց. սովորութեան համեմուտ զգեստաւորումը՝ որ երբէք շռայլ չէր, կազդէր ժողովրդի վրայ. Միւնոյն ժամանակ հանդիսատեսներէն մէկը չէիր գտներ, որ երախտագիտական զգացումով մը չը լիսստովագանէր նորա մեծ ազդեցութիւնը սոյն եկեղեցիի վերաշինութեան համար ստացած ընդարձակ հրամանազրի մասին:

Սոյն եկեղեցին վերաշինման հսկող մասնախումբն՝ Գեր. Սրբազնին պյս մասին ունեցած մեծ արժանիքը յատուկ երախտագիտութեամբ գնահատելու համար մի թանկագին մատանի նուիրած է նորին Սրբազնութեան, որը անհունապէս ուրախ կը դանէ ինքզի՞նքն, տեսնելով՝ թէ թաղ. խորհուրդին, և թէ ամբողջ ժողովուրդի համակրութիւնը դէպի ինքն. Ստուգիւ, խիստ գնահատելի է իւր հաշտարար ազդեցութիւնը, որի միջոցաւ ժողովուրդ բան մը չը լիսստովագանէր, անձնուիրաբար կաշիստէ և կընուիրէ. Ենթազրէ իրը 2000 սոկի կլորիկ գումար մը, որ գոյացած է թէ քարի թէ ծառերի և թէ զանազան նուիրատուութիւնների կողմանէ. Հիմնարկութեան հանդիսին գոյացած 70 սոկի գումարն ալ հետ հաշուելով. Միւնոյն օրը ժամ 5 էն մինչև 9 ը սովորական շքով կատարուեցաւ Սահմանադրութեան 24 րդ տարիովարձն: